

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեշրջանի	Նամակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌԱՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ես լին դրկոշիր եւ յարմար դատ- ուաններն միայն կը հրատարակ- ուին ստորոջովին կամ մասամբ:
Պողկարիոյ համար տարեկան 10ֆր " " " " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)

ԹՈՒՐԳ ԵՒ ԳԵՐՄԱՆ

Պատերազմին փողը հնչեց. Գերմանացիներն ազնիւ արիւնք պիտի խառնուին թուրքի պիղծ և գարշահոտ արեան հետ:

Թուրքը քաջաբար խողովողէ ետք Հայաստանի անդէն անպաշտպան ժողովուրդը, հիմակ հերոսաբար պիտի մարտնչի պատմական հեղինակ հետ: Արդէն մէկ շաբաթէ ի վեր թրքական զիւրապնութիւններուն արձագանգներն սկսած են որոտալ օսմաննան մամուլին մէջ:

Այնք որ 78ի ուսակթրքական պատերազմին գործուածքն ունի հետեւած են, կը յիշեն անշուշտ կարծեցեալ հերոսութիւններու այն արտառնայ շուրթեր որոնցմով թուրք մամուլը կողմէր վառ պահել իսլամ ժողովրդեան հայրենասիրական զգացումները: Ռուս բանակին գահավէժ յառաջխաղացումը արգելք չէր ըլլար թուրքերուն ենթագրի տարու թէ միւսած կռիւներուն մէջ միշտ յաղթական կըլլան մարգարէին զինուորները: Երբ ուս յաղթական բանակը եկաւ իր կայքն հաստատուի Պոլսէն գրկաչափ մը անդին, գեւ շատ մը թուրքեր ինքզինքնին կը խաբէին յաղթութեան ցնորքներով և մինչև իսկ ըսողներ եղան թէ ուս բանակը կամու բերած էին հող՝ երկու կողմէն պաշարելու և բնաջինջ ընելու համար:

Օսմանեան այս մտացածին շահատակութեանց շրջանը վերսկսած է. անցեալ օր, թուրք թերթեր հեռագրեր հրատարակեցին թէ թուրք վաշտեր բախելով յոյն անկանոն հրոսակներու հետ՝ այնքան քաջապէս կռուեցան որ իրենցմէ միայն մէկ իսլամ շէյխ եղաւ, իսկ թշնամիէն հարիւրներով մարդիկ ինկան թուրքի տհեղ սուրին ներքեւ:

Այս ազգը, որուն գոյութեան պայմանները ուժեղացան քան զուած են և որ իր կռուանին յիտին միջոցներով վրայ կը տատանի արմատէն փառած վիթխարի կազմի մը պէս, չուզեր իր վիճակին

հիշգրտակցութիւնն ունենալ, հիւժախառտարի մը հանգոյն որ իր փճացած թուրքովը՝ տակաւին կը ճգնի առողջ ձայն և ուժեղ բաղաձայն ունենալ:

Այն նոր յորձանքը որուն մէջ կը նետուի գլխիվայր, գուցէ իր կեանքին յետին դատաւճիւնն ըլլայ. վերքերով ու պալարներով ծածկուած այս մարմինը չորս կողմէն արիւն և նիւթութիւն կը ժայթքէ. պիտի գայ վայրկեան մը, և հետո չէ ան, ուր այս ակտաւարակ գանդուածը պիտի ողորդի իր առաջ բերած զողորմութեամբը:

Բայց, իր բաւմնելի հոգեվարքին մէջ, այս պայտօնական խոշոր հիւանդը չի լքանալ իր մահահայտ վերքերուն արիւնը գաղբեցնել ջանալու փորձեր կըլլան հոգածու և քրիստոսաշունչ հիւանդագահներու, երապակեան վեց մեծ... Դաւաճանութիւններուն կողմէ: Արդարեւ մարգարեական այս ընթացքին մէջ է ահա որ գերադուցապէս ի հանգէս կուգայ քրիստոսական կրօնքին վսեմ մեծութիւնը: Մտածեցէք. մանկուսական թուրքիւն, ակտաւէտ ու մահամեծ, տաք խնամքներով կը շրջապատուի քրիստոնէալ Եւրոպայէն, որ Գերմանիոյ պատուէրին կը համակերպի տկարին օգնել:

Այս հիւանդագահութեան աստուածային գործին գլուխը կը գտնուի խղճահար Գերմանիան, որ իր ամենէն ճարպիկ բժիշկները կը զրկէ մանրագնին հսկողութեամբ մահուան ճիւղներէն փրկելու համար հիւանդը:

Այն սէրը զոր գերմանը յոյց կուգայ իր մահմտական եղբորը, շատ մը հաւանական ենթագրութիւններ ընել կուտայ մարդու իսլամին կրօնքը՝ իր ստեղծութեան և վերջապէս գիւրգ համակրութիւն չէր վստայած: Մարգարէն իր հօրինչրով զեղուն գրախառնին պարտաւն մէջ հրճանքէն կը սարսուռայ անշուշտ՝ ինչ որ քաջաբար կրթութեան գէնիթին մէջ տեսնելով իր մարգարեաշու կրօնքին գտած այս անակնկալ ընդունելութիւնն ու յաջողութիւնը. կը յուս

տայ թիչ տանէն իր փարախին մէջ մակաղել ամբողջ ազգ մը որ դարեւ ի վեր Գերմանիոյ կը պաշտէ: Պատիւ իրեն:

Բայց նախատինք Գերմանիոյ: Չափի տօնը կուգայ սաստկապէս շնչող այս ազգին բաւմնելի դաւաճանութիւնը՝ ընդգէժ Գերմանիայէն, ընդգէժ եղբայրասիրութեան, ընդգէժ ազատութեան:

Գերմանական հոգեկեալ ազգամարտութիւնը կերթայ զօրացնել թրքական կազմալուծուած բանակը. վեր կելլայ տաճկին սուրը և գերման ազգամարտին տուած անվրէպ նշանին վրայ՝ կիջնայ հելլենին գլխուն. թուրք չի նշանաւորին տեղ՝ գերմանական սուր և անխալ աչքը յոյց կուտայ այն կէտը զոր օսմանեան թնդանութիւն ուսմը պիտի երթայ զարնել. կուշառամով թուրք հրամանատարին տեղ, որ պնակ մը համեղ բիւլուի փոխարէն կը զիջանի սխալ շարժում մը ընել տալ իր շինուորներուն, գերմանը, անկաշառ և անկեղծ, ազգամարտական ամենէն անխառնափշի ուղղութեանը մէջ կը գնէ թրքական քաջարի բանակը:

Իր գործած այս անքուսելի ուժերն բարձրութեանը չափ գտնէ փոխադրութեան մը յոյսն ունենար. մարգարէն ամենէն նուիրական և ամենէն անբռնարարի պարտաւորութիւններ այսպէս ոտքի կոխան ընելու համար երկու պատահաններ կրնան գոյութիւն ունենալ. նախ՝ նիւթական այնպիսի շահ մը որ մտքին մարմանը տայ. երկրորդ՝ ազգային նկարագրին և կենսական հիմքերուն մէջ քայքայում մը, չփոթութիւն մը, կարճ խօսքով, այլասերում մը:

Եւ ուղիհետեւ, մենք որչափ որ գիտենք, օսմանեան պետութիւնը միտք մարմնեցող նիւթական շահ մը չի կրնար նետել ու է ազգի մը գիւրգը, երկրորդ պատճառը կուգայ կը ցցուի մէջանդ. այլասերում:

Աղք մը կալատիւրի, այսինքն իր ազգային ազնիւ յատկանիշներէն կը զրկուի: Գերման ազգը այլասերած է, գտնէ իր բարձր դատա

կարգին մէջ, — այլանգակցած է, անբարոյացած է, տաճկէն աւելի գէշ է. հետեւապէս ուրիշ կերպ չի կրնար ընել, չարագործութիւն և վատութիւն միայն:

Պատմութեան մէջ սեւ թուիս արատ մը պիտի մնայ իր ըրածը. գուցէ՝ բիրտ զօրութեան առջեւ յոյն ընկճուի դիւցազնաբար. սակայն գերման կառավարութեան այս հակաքրիստոնէական զորքը անշինջ անէծքի մը պէս գամուած պիտի մնայ իր ազգին ճակտին վրայ:

ԶԵՅԹՈՒՆՅԻՆ ԶԱՏԻԿԸ

Զէյթունցին կը սիրէ վառօդի հոտը, անոր մուկն է իրեն զուարճութիւնը, կարծես ինք բաղադրութիւնն է ծծումբին ու բորակին, այնքան դիւրավառ ու դիւրապայթ:

Աղհացքը — մեծ պահքի յիսուն օրերը — Զէյթունցին ապաշխարութեան օրերն են. մեղքի հաշիւները փակուած են այլ եւս, լուրիս, սխեւ, ոսպ կամ բանջար ծամելով: Այդ նուիրական օրերուն մէջ ճարդի մօմէն սիկառ վառելէ զգուշացող Զէյթունցին իր գարաւսը թշնամիէն մէկին կամ տանին արիւնը լղլղը մեղք հաւմարելու շար սովորութիւնը չունենալով, ամենայն ջերմաւառութեամբ կերթայ կը խոստովանի իր մեղացած մեղքերը:

Մեծ պահքի նախագուռն համարուող բարեկենդանի աւուրց յիշատակը եօրը շաքարներու խօսակցութեանց առարկան է:

— Վարդանը, ա՛խ, անման վարդանը, լաւ նշան առաւ, առաջին հարուածով հաւկիթը օգը թնցուց: Միւրքիսիքը, Սմբատը, Թորոսը և այլն. անկէ վար չեն մնար:

— Հապա ի՞նչ ըսենք սա օձի ձագ վահանին, որ կարծես վառօդին և գնտակին լեզուներն ալ գիտէ, և կը հրամայէ անոնց ուղած ճանապարհովը գնալ: Մատանիի մէջէն գնտակ անցունել

ամէն կտրիճի գործ չէ, ապրի վահան, չատ ապրի, մեծ կտրիճի ապագայ կը խոստանայ. ա՛խ, օրերը տեսնանք:

Մեծ պահքը անցաւ. եկաւ պըտղինէ (1) (Ծաղկազարդ), Երեք Ամենակալ (Աւագ հինգշաբթի), խթում ու Զատիկ և ահա Քրիստոս յարեալ ի մեռելոց: Հաւիթ թէն շա՛տ աւելի անարատ կարմիր կտրիճներ, կարմիր աղջկունք պատրաստ են պարի, երգի և անվերջ հրճուանաց:

Հայ աշխարհի մէջ չը կայ տեղ մը, չը կայ անկիւն մը որ ունենայ այնքան ազատ ու անուշ Զատիկ: Զէյթուն զուտ հայ ամբողջութիւն մըն է, գործ չունին հոն ոչ թուրքը, ոչ օտարը և ոչ հրէան կամ ուրիշ խառնուրդ ազգեր, և ինքն է միայն որ իր 40000 քաղքէնի ու գեղեցիկ կտրիճ ու կտրիճահիններով կը ծնրագրէ Յիսուսի խաչին առաջ և կը տօնէ անոր Յարուսթիւնը:

Եւ ի՞նչ տօն. դարձեալ վառօդ, միշտ վառօդ. կարելի՛ է միթէ այդ բիւր բիւրոց օրհնեալ բաղադրութեան զաւկին հեռանալ աւոր հոտէն որ խոնկէն ու կնգրուկէն աւելի անուշաբոյր է իրեն, հրացան, մուխ, պայթ ու ճայթ, ատկէ միայն կախորժի Զէյթունցին. սակայն ափսո՛ս որ հինգ միլիոն Հայոց ազգը տարեկան քառասնական փառա վառօդագին չը հաճեցաւ հասցնել լոկ չոր խօսքով ու ցամաք կեցցէներով սիրած Զէյթունցիին որ դարերէ ի վեր իր դիւցազնական գործերով հայ անուան փառք ու պարծանք եղած է:

Զէյթունցին՝ հոյ չունի և անօթի է. բայց վստահ եղէք որ այսօր ալ Տաւրօսի աննուաճ բարձունքներէն միեւնոյն ասպետական ոգիով, միեւնոյն հրացանի բոմբիւններով կը գոչէ ու կը գոռայ:

Քրիստոս յարեալ ի մեռելոց:
Յատրիս Թ. Չափրեան
Վառնա 12 Ապրիլ

ԱՐՁԱԳԱՆԳ

Այս իրիկուն եկեղեցւոյ աւագ վարագոյրը բացուելով, երեւան պիտի հանէ եօթը շաբաթներէ ի վեր ծածկուած խորանը համակ լուսաշող և ծաղկազարդ: Եւ աղօթքի միմունջներու և խոնկի անօր ամպերու մէջտեղ բերկրաւթ աւետիս մը պիտի տրուի հաւատացեալին:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այս աւետիսը ամեն քրիստոնէի սիրտ անգամ մըն ալ թունդ պիտի հանէ ինչպէս որ իր սիրելի զօրավարին յաղթանակներուն պատ մուծիւնը ծեր զինուորին սիրտը կը յուզէ:

(1) Զիթենի

Այս տպաւորութեան տակ է որ ուրիշ տարիներ քրիստոնէայ հայը եկեղեցիէն մեկնելով տունը կը դառնար, ընտանեկան ճօն սեղանին շուրջը բոլորուելով, աւանդական կարմիր հաւիթը ճաշակելու համար:

Այս տարի խնդիրը տարբեր է սակայն, բոլորովին տարբեր:

Միտնցմէ շատերը որոնք անցեալ տարի իրենց անգործ տան մէջ ճօն սեղան մը ունէին, այս տարի գաղթականի տառապանքները կը բամբն մինչեւ մրուրը և գծրախտ ընտանիքի մը բեկորները հաւաքած՝ սղորմութեան կարծի հացը միայն կը գտնան իրենց ակօսանքուն տակ:

Այն հայուհիները որոնք անցեալ տարի իրենց տան թաղուհիներն էին սիրուած և յարգուած, այն հէգ հայուհիները այս տարի թրքական հարէմները կը լեցնեն ու զրօսանքի առարկայ դարձած են, երթարկուած այն վատ սրիկաներուն նոյկալի գրկախառնումին որոնք դահիճներն եղած են իրենց ամուսիններուն, հայրերուն, զաւակներուն:

Ասոնց արգիլուած է լալ, միշտ լալ իրենց սիրելիներուն վրայ. զի թուրքը սուգի նուիրականութիւնը չըմբռնէր: Այս հէգ հայուհիներուն արգիլուած է արտաբերել «Քրիստոս յարեալ»ը. զի թուրքը հաւատափոխ ըրածէ զանոնք: Արդեօք ի՞նչ յիշատակներ կը դառնացնեն այս գծրախտ հայուհիներուն սրտերը երբ երկու զատիկները բաղդատեն:

Անցեալ տարի մենք չունէինք այնքան որբեր որոնք նօթի և անպատապար, երկրէ երկիր չըլէին խորդ հօր մը ի խնդիր:

Թրքական վայրագութեան զոհ գացած չէին այն Հայերը որոնց դիակները այսօր կը ծածկեն ծովու յատակը և հողին խաւերը վոսփորէն մինչեւ վան և Տրապիզոնէն մինչեւ Երուսաղէմ. այլ աւուրդ ու կայտառ էին և ստոյգ ակնարկով մը կը գիտէին ապագան:

Ծոնկի գալով խոնարհինք անոնց անմահ յիշատակին առջեւ:

Հայաստանի ընդարձակ գաւառներուն մէջ Քրիստոսի անունը արտասանուելէ դադարած է: Հազուադիւրս են այն տեղերը ուր պիտի գոչուի համարձակ «Քրիստոս յարեալ»:

Անթիւ եկեղեցիները ուր Քրիստոսի անունը կ'օրհնուէր՝ այժմ աւերակ դարձած են կամ աղտոյն զուծեանց վայրերու վերածուած: Քրիստոս կորսնցուց Ասիոյ մէջ ունեցած իր դարաւոր մեր պաշտպանները. և սակայն մեր հղբայրներն ի Քրիստոս, ոչ վայրագութեանց առաջն առին և ոչ ալ պատժեցին ոճրագործները. հոգեւորն անգամ չըլին:

Քրիստոս ալ հոգը չըրաւ:

Զնծութեան տարի մը չէ այս: Սեւ տարի մըն է. սեւ հաւիթներ միայն պիտի կրնանք ճաշակել:

Եթէ միթարութիւն մը կայ, այն ալ սա է թէ այդ միթութեանց կամարներուն վրայ անհամար լոյսեր կը պլպլան: Այս լոյսերը մեր հերոսներուն և նահատակներուն հոգիներն են որոնք մեզի կը նային հրեղէն աչքերով:

Կը նային տեսնելու համար թէ ի՞նչ կընենք, թէ ի՞նչ պիտի ընենք:

Ուշաբերի՛նք:

Մենք որ դեռ ողջ մնացած ենք այնքան հաւածանքներէ ետք, մեծ կոչում մը ունինք: Պիտի խորհիւնք անոնց որ տառապելով մեռան և ասոնց՝ որ տառապելով կ'ապրին. այսինքն բովանդակ հայութեան:

Միեւնոյնը պարտք ունենալէ կը դադրին, բայց ժողովուրդութիւններ կը թողուն:

Մենք կը ժառանգենք բոլոր այն սուրբ պարտքերը զորս ունէին տարածամ մեռնողները՝ գէպ ի Հայաստան:

Ամեն Հայու պարտքը բարդուած շատցած է. ամեն հայ կը պարտի տաւը հայու չափ խորհիւ և գործել:

Երբ վարագոյրը բացուելով, երեւան հանէ եկեղեցիին խորանը, Հայը թող խորհի թէ ուրիշ նոյնքան սուրբ խորան մը կայ, որ դեռ ծածկուած կը մնայ իր աչքէնէն և որոյ թանձր վարագոյրը ինք պիտի պատուէ:

Ազատութեան խորանն է այն:

Երբ իրարու հանգիպինք այս սուրբ օրերուն մէջ, մի՛ ըսէք նախ՝ «Քրիստոս յարեալ»... այլ ըսէք իրարու - Հայրենիքը դեռ խոր սուգի մէջ է:

Եւ ձեռք ձեռքի տուած ստենիդ, ձեր սիրտերն ալ իրարու տուէք անոնց բոլոր ազնիւ թիկերը իրար խառնելով ամենէն անկեղծ եղբայրասիրութեամբ:

Եւ այն ատեն չի պիտի ուշանայ ամբողջութեամբ երեւալէ ազատութեան արեւը որուն անդրանիկ ճառագայթները միայն զգացինք, սիրուն Հայրենիքի մէջ պիտի երևայ որուն հողին վրայ մաղթենք որ արժանի ըլլանք յառաջիկայ տարի գոչելու:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»

Գամբը-Արշալիր

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉՈՒՄԵԱՆԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ

(Շար. Ասիւ. Թիւն. եւ վերջ)

Խաչումեան բաղդուարութիւն ունեցաւ ապրելու Միտցեալ Նահանգաց ամենէն բարեկիրթ ու գիտուն քաղաքին, հպարտ Պոսթո-

նի մէջ, իր բարեկամներն և ծառայողները, Տիար և Տիկին Պարոյժ. և Տիար Պէքուէլ, Տիկին Ճուլիս Թաու, Տոգ. Հէյլ և այլ շատեր, լայն սրտի ու մաքի տէր անձեր են, ամենքն ալ հանրածառութիւն իմաքադիր, զրազէտ և մարդասէր: Ընկերակցութիւնն այսպիսիներու, որոնց կեանքի գեղագոյն նպատակն է ամեն կապ ու կապանք մերժող մարդկութեան համապարփակ սէրը, ի հարկէ զօրաւոր տպաւորութիւններ թողած էր խաչումեանի զգայուն սրտին վրայ: Իր ընդածին իղձերն ու ձգտումներն այս միջավայրի մէջ անտարկոյս աւելի ազնուացան, ու բովբի մը մէջ հալուած ոսկիին պէս զտուեցան: Այս ազդեցութիւններն ու ներշնչումներն արդեօք որչափ արդիւնաւոր պիտի ըլլային կուսակրօն եկեղեցական ըլլալու պատրաստող այս երիտասարդին ապագայ գործունէութեան մէջ:

Ամերիկայ գացողներէն շատերը գործաւրական դասակարգէն ըլլալով աննշան ապրած են, շատերն ալ միտիօնական միջնորդոսի ներգործութեան տակ այլասերած իրենց մուրացիկի և խաչագողի բնաւորութեամբ աննպաստ կարծիք կազմել տուած կն մեր ազգին նկատմամբ: Արտասահման կրթութեւն գացողներուն շատերը կարող չեղած չեն տեսնել լուսաւորութեան բարձրէն սաւառնող ոգին, զանազանելով զայն վարը սողացող կեղտոտ հոտանքէն, գլուխին միջի ուսմանքով ուղեցուցած, զըրպանին կէս վկայական մը, ձեռքերին գաւազան մը, քթերին ոսկեղէն ակնոց, վերագարձած են հայրենիք՝ ապացուցանելու համար թէ ճշմարիտ քաղաքակրթութիւնն իրենց մարմէն ամենեւին ներս չէ թափանցած: Մինչդեռ շատեր միտիօնակ ու անհամ յօգուածներով եւրոպական այսինչ կամ այնինչ քաղաքին մէջ գտնուելին յաւետ կուզէին տարփողել և փանաքիյա շողութիւններու համար թմրուկ զարնել տալով աղբէն փառք մուրալ, խաչումեան գիտցու համեստութեամբ յայտնի ծառայութիւններ մատուցանել իր ժողովուրդին:

Այս նկատումներով իր մահ արդարեւ աւարելի է. իր ապագայ օգտակարութեան չափն ու ծաւալ կարելի էր հեշտիւ գուշակել իր ընտիր ընտիր ձիւքերէն, ընդունած բարեք կրթութիւնէն, իր գովելի փառասիրութիւնէն և այն անյողգող հաւատքէն զոր ունէր ազգին վերականգնման վրայ: Զինքը ճանչցողները իր մէջ կը տեսնէին մեր ապիկար եկեղեցականութեան համար մեծ միթարութիւն մը: Մահն եկաւ խորտակեց այս ակնկալութիւնները, բայց տիպար հայ ուսանողի յիշատակն յաւետ անջինջ պիտի մնայ:

Թ. Թ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 11 Ապրիլ

Սեմաֆոր իր Պոլսոյ թղթակցէն ուղարկուեալ նամակ մը ստացած է, որ կը պարունակէ հետեւեալ տեղեկութիւնները.

— Թոգատի գէպքերուն պատճառաւ բարենորոգմանց խնդիրը նորէն սկսեալ է արծարծել գիւտնադիտական շրջանակներու մէջ: Միգրիական գեսպան Սըր Քըրրի առիթէն օգտուելու ուղղելով հարցուցեր է իր պաշտօնակիցներուն թէ կուզեն վերջապէս, այո՛ կամ ոչ, վերջ գնել շարքերուն՝ ստիպելով Սուլթանը գործադրել բարենորոգումները: Պատասխան չկայ: Սուլթանը հրամայեալ է մեծ վերջին որ հայոց ապստամբական շարժումներուն մասին անգղաքա մը պատրաստէ և իրեն ներկայացնէ: Մագապաւան գետ չէր ներկայացուած, երբ Ս. Օրմանեան իմացուցեր է Դրան թէ ինք ստիպուած է հրաժարիլ՝ քանի որ ոչ միայն խոստացուած բարենորոգումները չեն գործադրուիր, այլ շարքերը կը վերսկսին: Ռուսական և գերմանական գեսպանները ազդարարեցին իրենց պաշտօնին թէ Դրան մեծ սխալ մը գործած պիտի ըլլար, եթէ բնաւ գոհացում չտար հայոց Պատրիարքին պահանջներուն, որովհետեւ ատով պատրուակ մը ընձեռած պիտի ըլլար թուրքիոյ վրայ ճշուժագործագրելու ուղղով տէրութեանց նոր դժուարութիւններ յարուցանելու: Ասոր վրայ Սուլթանը կը ստիպուի իրաւունք մը հանել, որ կը հրամայէր մնացած բանտարկեալները և մահուան դատապարտուած եկեղեցականները արձակել:

Վերոյիշեալ Մագապաւան պիտի պատրաստուի ելլել սա իմաստով. «Հայք իրենց տիեզերահռչակ ապրախտութեան մի նոր ապացոյցը տուին: Երբ Ն. Վահագնաւորութիւնը ամեն ջանք կ'ընէ կայսրութեան բոլոր բնակիչներուն բարենորոգումներ շնորհելու, երբ գիշեր ցորեկ կաշխատի իր բոլոր հպատակաց բարոյական և նիւթական զարգացման նպատակով օրէնքներ հաստատելու, հայոց Պատրիարքը կը պատրաստուի իր հրաժարականը տալ, որպէս զի ատով նոր տաքնապ մը առաջ բերէ: Հայերը կրեալէի ապստամբութենէն և Յունաստանի սպաննական դիրքէն օգտուելու ուղղելով, կը փորձեն վերստին յեղափոխական շարժումներ ընել և երկրին խաղաղութիւնը վրդովել: Ռուսի հարկ է ճշողական խիստ միջոցներ ձեռք առնել խռովարարներուն դէմ, որպէսզի իսլամութիւնն ու խալիֆայութիւնը անվտանգ և անվերջ մնան»:

Էփէրէկ 6 Մարտ

Հետեւեալ մասնաւոր նամակը մեզ հաղորդուած է ի հրատարակութիւն.

Տաճիկը քաջ կը ճանչնայ իր որսը և գիտէ որսալու ժամանակը. եղբայր, նախորդեալ կ'իմացնէի ձեզ թէ յաջողի նամակս բանտէն պիտի դրնամ. մարգարէութեանս մէջ հապիւ սխալած եմ:

Բարեկենդանի երեքշաբթի առաւօտ, յանկարծ ոստիկանները կոխեցին . . . ի տունը, և ձեր բակաւելով իր որդին 15-16 տարեկան պատանի մը, որոյ հայրն եւս խժգժաբար սպանուեցաւ էփէրէկի գէպքին, տարին բանտարկեցին:

Այդ միջոցին ես ալ հոն էի, իսկոյն կծիկը դրի տանիքի ճամբով. պատանին ազատելու համար շատ աշխատեցայ, վճարել խոստանալով իրենց տան համար որոշուած Գաւաւի պարտքը միայն, սակայն անիծից արմատ դատաւարը զայրացած կը մըռնչէ դատարանին մէջ՝ Տիւնիս քեաֆիւր տիւնի օրտոն քի, տայրաւընը քաւաւընը տախիւ ալմաւորգաւ լօձնդոն աւալա գոյ վերմէմ, » ճարհատ մեր և . . . ի տան Գաւաւի տուգանքը վճարելով ազատեցինք բանտէն . . . քանի մը օրուան համար, որովհետեւ անդին գետ նոր տուրքերին կը մնայ:

Տակաւին կը շարունակէ մեր տարտամ վիճակը. կառավարութիւնը իր գիտցածէն մազի չափ չի շեղիր. չափազանցած չեմ ըլլար, երբ ըսեմ թէ գամ քան զգամ աւելի կը վատթարանայ՝ քան կը բարւոքի մեր վիճակ:

Աստուած յոյսը կարծես հայուն համար ստիգծիւ է և այն ալ այս օրերուս համար. քանի խրատ վերակը ծանրանայ մեր վրայ, անհամեմատ կերպիւ կաճի մեր յոյսն ու հաւատ զէպ ի գիւթիչ ապագան:

Առջի նամակներէս կրկին ընդգործակելով սա տողերը՝ կուզեմ ընդհանուր գաղափար մը տալ ձեզ մեր կացութեան վրայօք. «Ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ո՛չ շուկայ, միայն տուրք ու տուգանք ուրիշ բան չիկայ»:

Կայսերական ընդհ. ներումին վրայ, մօտակայ պարտեզներն ու այգիներն իրարմէ համարձակութիւն ստացանք:

Ապտուած ինք ողորմի:

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ Ք

Լոյստոնի մէջ սկսած է հրատարակուիլ նոր թերթ մը, Մարտ, ուսկից կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.

Ջէյթունի նոր զօրանոցը վերջացած է, բայց իր վերանորոգումին մէջ ալ մահաբեր եղած է թուրքերուն: Ամենէն առաջ 900

զինուոր զետեղուեցան, բայց 360ը հիւանդութենէ մեռան, իսկ մնացած 340ը ծանրապէս հիւանդանալով փոխադրուեցան Մարաշ ուր մեծ մասամբ մեռան: Բժիշկներ Ջէյթուն զրկուելով քննեցին զօխանոցը և յայտարարեցին թէ հինգ տարի պէտք է անցնի որ կարելի ըլլայ հոն բնակութիւն հաստատել: Ինչ որ չարգելիւր թուրք իշխանութիւնը նոր զինուորներ զրկել, ու ասոնք ալ հետզհետէ կը մեռնին:

— Մերսինի Միգրիական հիւպատոսը, Մ. Մասի, յունուարի մէջ 2օք-Մարգուանի կողմերը գնաց, սպանութեան մը քննութիւնը կատարելու համար: Երեք հայ և մէկ յոյն սպանուած են. կ'ըսուի թէ հայերը խաչը հանուել են, իսկ յոյնը միայն կախուել է: 2օք-Մարգուանի հայերը վերին աստիճանի գրգռուած են այս խժգործութենէն և մէկ քանի քահանայ և աշխարհական իսքենտէրուն երթալով հեռագրով բողոքագրեր զրկեցին Դրան:

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

ԱՂՔԱՏԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1897 Մարտ ամսոյ 1—31

Մուտք	Ֆր. ան.
Ընկերութեան առժամեայ վարչութենէն յանձնուած	354.70
Թատրոնի ապառիկէ գանձուած	7.—
Նուիրատուութիւն Ռուսոնգէ՝ ձեռամբ Տ. Տօքթ. Կաշեանի	18.—
Մարտ ամսոյ բաժնեգիրներէ	79.60
	459.30
**	
Ելք	
Սենեկի կահաւորման եւ գիւտնի ծախք	31.90
Երկու կնիքներու պատրաստութեան	16.—
Հաւաքչի վարձք	3.—
Ընկերութեան ընդհ. ժողովներու մէկուն միջոցին «Սիսակեան» ընթերցարանի պատկանող «Արաքս» հանդէսին զոգցուած լրիւնուն հատուցումն	15.—
Հիւանդներուն դեղի եւ սնունդի	116.40
Գանձապետին քով պատրաստ գրամ	277.—
	459.30

Ի գիմաց վարչական ժողովոյ

Ատենապետ Գ. Սիւրմեան
Ատենադպիր Գ. Սիւրմեան
Գանձապետ Օննիկ Յակոբեան

Աղքատախնամ ընկերութեան ընդհ. ժողովոյ գիւտնա գործադիր ժողովոյ ներկայացուցած սոյն հաշուեկշիւը քննելով ճիշդ գտած է եւ ըստ այնմ կը վաւերացնէ:

Դիւան աղքատախնամ ընկերութեան ընդհ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Տօք. Աշմեան Յ. Գուրպեան

8/20 Ապրիլ 1897

Վառնա

ՄՈՒՀԱՐԷՊԵՆԻՆ ՍԵՅԱԼԵԹԻ

Պէնիպէշերին խլղէթիւնտէն պէտք թէ վարելու մոլթալա օլըն. տըգտա, հատարգ հէսապարզ մուհարէպէշերտէ միլիօնլարճա քէսանըն եանի միլէլ ու ազվամըն եէք. տիկերինի գըրուպ մահվ իթմէլէրի կէօղ էօնիւնէ կէլիւպ՝ ազլը սալիմ աահապը ինսանիյէթինտէն նէֆրէթ իտէրճէսինէ էլինտէքի թիթապը պէթ թէրաֆ իտէր. վէթէֆէքքիւրաթ տէրեսընա տալուպ, ինսանլարըն շու սէֆալէթին հիքմէթ ու սէպէպլինի արամաղա մէճպուր օլուր. էկէթ մէսէլէլ՝ մէգհէպ նօգթաի նազարընսան թէտ. գըթ իտէր իտէ, վուգույա կէլէն մուհարէպէշերի վէ գաթթալը՝ ասըն իգթիգասընճա, շէրաթի մէգհէպլիյէթ միւթապըզ կէօրիւր, եանի, իսլամ խալիֆէլէրին քեաւֆիլիքի վէ Բարալարըն մէգհէպ թէֆրիգէսինէ մէնսուպ օլան խըրիսթիանլարը տին ուղուրունա գաթլ ու մահվ իթտիւրտիքլէրի կիպի: Պոնլար նէ՝ տէհէլէթի մէն. զարէլէր իտի. . . . ճանիի զալի վէ տինտար թապիր իտէրլէր իտի:

Էկէթ մէսէլէլէ վաթանբէրվէր. լիք վէ միլլիյէթ նօգթաի նազարընսան պազար իտէ, Ալէքսանտր Մաքէտոնիալը, Սուլթան Մուհամմէտ, Նաբօլէօն Պօնաբարթ վէ սաիր պու կիպի խուրիզ վէ զատտար հիքիւմտարլարա պիօ. յիւք իւնվանը վէրիլիշ պուլուր. զիրա պուլար վաթանբէրվէրլիք նամընա՝ պէնիպէշերին գանը իլէթէրէտէն թըրնաղա պօյանմըլլար տըր. նէ՝ վահէլէթ Ֆա. գաթլ նէ վազըթ պու մէսէլէլ միւհիմէլէլէ՝ ինսան կիպի, ինսանիյէթ նօգթաիւնսան պազըլըր իտէ, քէմալը թէէսիւֆլէ՝ մէգհէպ, միլլիյէթ վէ վաթան նամընա էվ. վէլտէն պէրու տինտա երեզլունտէ վուգույա կէլէն մուհարէպէշեր վէ խապատէթլէր էհալինին էսէրի ճէ. հալէթի օլուպ, հիւքիւմտար վէ մէգհէպ բէյիպլէրինին մաղուրիյէթ ու խօտպիլիկինէ միլիօնլարճա քէսանըն գուրպան կիթտիկի. նէ հիւքմ վէրիլիւր:

Անճագ շու ասըր միւթէրազ. գը թապիր իտիլէն զէմանմըլտա հուսուլա կէլէն ահվալը միւտհիշէ վէ հարէքեաթը մէլունէլէ նէ նա. զարլէ պազմազ լազըմ կէլէնէլինի պիլէմէյօրըզ:

Մաղլումըն զալիմին բէնէլի զուլմընտան գուրթըմազ վէ ինսանիյէթ հուգուգընա հայիզ օլմազ իսթմէսինէ միլլէթլէրին էն միւթէրազըր՝ եանի Ալըմանեա՝ թարաֆընտան իքրահլէ պազըլմազտա վէ հիմմէլէպ օլան սայիր տիւվէլի մուազզամատան թօք կիւլլէլէրի իլէ մէմանէաթ օլընմազտա տըր: էվլէթ մէգհէպ ու միլլիյէթին շու ասըրտա էվրո.

